Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 02

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<03>> փետրվարի 2023թ. ք. Երևան

2023 թվականի փետրվարի 3-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 7 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Սիմոնյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ
Ա. Ստեփանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար
Ս. Բաղինյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական, հանձնաժողովի անդամ
Խ. Սողոմոնյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ, հանձնաժողովի անդամ
Տ. Գասպարյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային, ջրային օդային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության երկաթուղային տրանսպորտի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ:
Ռ. Այվազյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանը:
Նիստն արձանագրում էր հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 2 հայտերի քննարկում:

2.Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված 21 հայտերի քննարկում:

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտերի քննարկում

1.1 Քննարկվեց՝

«ՏԵԽԶՆՆՈՒՄ 2» ՍՊԸ-ի /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2023 թվականի հունվարի 13-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2023 թվականի հունվարի 13-ին ներկայացրել է հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին: Ներկայացված փաստաթղթերը ուսումնասիրելուց հետո, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2023 թվականի հունվարի 13-ի թիվ ԱՍ/25.1/1083-2023 գրությամբ Կազմակերպությունը տեղեկացվել է ներկայացված փաստաթղթերում առկա թերությունների վերաբերյալ, մասնավորապես՝ առ այն, որ հայտում և հայտին կից փաստաթղթերում բացակայում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 9-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հայտը՝ համաձայն N 1 ձևի, 9-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ տեխնիկական զննության համար նախատեսված տարածքների «Տեխզննում 2» ՍՊ ընկերության օգտագործման իրավունքի վկայականի պատճենը, ինչպես նաև տարածքի հատակագիծը՝ լայնության, երկարության և մուտքի և ելքի նշումներով:

Միաժամանակ Կազմակերպությանը տեղեկացվել է, որ ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի՝ եթե պատշաճ ձևով նախազգուշացումը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում հայտում կամ կից փաստաթղթերում առկա ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր, ներկայացված հայտը ենթակա է մերժման:

Կազմակերպությունը չի ներկայացրել նոր նյութեր, չի վերացրել 2023 թվականի հունվարի 13-ի թիվ ԱՍ/25.1/1083-2023 գրությամբ նշված թերությունները:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՏԵԽԶՆՆՈՒՄ 2» ՍՊԸ	0 կողմ, 6 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի և ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի պահանջներին՝ հայտը ենթակա է մերժման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

1.2 Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր ԱՐՏԱԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2023 թվականի հունվարի 24-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և 2023 թվականի հունվարի 30-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2023 թվականի հունվարի 24-ին ներկայացրել է հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին: 2023 թվականի հունվարի 30-ին Կազմակերպությունը ներկայացրել է լրացուցիչ փաստաթղթեր՝ վերացնելով հայտին կից փաստաթղթերում առկա թերությունները:

Կազմակերպության արտադրական բազայի ուսումնասիրությունն իրականացվել է լիցենզավորման և թույլտվությունների բաժնի գլխավոր մասնագետ Սասուն Գրիգորյանի և նույն բաժնի առաջատար մասնագետ Սամսոն Գրիգորյանի կողմից:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ԱՐՏԱԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ	6 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի և ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2. Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտերի քննարկում:

Քննարկվեցին՝

Բենիկ Արամայիսի Հակոբյանի 13.01.2023թ. և 25.01.2023թ., Սամվել Ազատի Եղոյանի 11.01.2023թ. և 26.01.2023թ., Արսեն Երեմի Կոստանյանի 11.01.2023թ. և 26.01.2023թ., Մանվել Ազատի Եղոյանի 11.01.2023թ. և 26.01.2023թ., Արմեն Կառլենի ՈՒնուսյանի 16.01.2023թ. և 26.01.2023թ., Վահան Մարտիրոսի Ղազարչյանի 13.01.2023թ. և 25.01.2023թ., Լևոն Բադալի Ղազարյանի 26.01.2023թ., Արտյոմ Ռուբենի Մելիքյանի 26.01.2023թ., Գեղամ Պետրոսի Մելիքյանի 26.01.2023թ., Ռազմիկ Ռաֆիկի Միսկարյանի 30.01.2023թ., Կարապետ Գեղևոնի Ավետյանի 30.01.2023թ., Կտրիչ Վահանի Մնացականյանի 30.01.2023թ., Արայիկ Լևի Խաչատրյանի 30.01.2023թ., Ալեքսան Էդուարդի

Բաղդասարյանի 30.01.2023թ., Ժորա Կարապետի Մնացականյանի 30.01.2023թ., Արտուշ Անուշավանի Աբգարյանի 30.01.2023թ., Արթուր Անատոլյայի Սարուխանյանի 26.01.2023թ., Աշոտ Մեսրոպի Գրիգորյանի 27.01.2023թ. Վրեժ Ռուբենի Գևորգյանի 27.01.2023թ., Էդիկ Հովակիմի Փարսադանյանի 31.01.2023թ. և Տիգրան Սարգսի Մելիքսեթյանի 31.01.2023թ. դիմումները՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց Բենիկ Արամայիսի Հակոբյանի 13.01.2023թ. և 25.01.2023թ., Սամվել Ազատի Եղոյանի 11.01.2023թ. և 26.01.2023թ., Արսեն Երեմի Կոստանյանի 11.01.2023թ. և 26.01.2023թ., Մանվել Ազատի Եղոյանի 11.01.2023թ. և 26.01.2023թ., Արմեն Կառլենի ՈՒՆուսյանի 16.01.2023թ. և 26.01.2023թ., Վահան Մարտիրոսի Ղազարչյանի 13.01.2023թ. և 25.01.2023թ., Լևոն Բաղալի Ղազարյանի 26.01.2023թ., Արտյոմ Ռուբենի Մելիքյանի 26.01.2023թ., Գեղամ Պետրոսի Մելիքյանի 26.01.2023թ., Ռազմիկ Ռաֆիկի Միսկարյանի 30.01.2023թ., Կարապետ Գեղևոնի Ավետյանի 30.01.2023թ., Կտրիչ Վահանի Մնացականյանի 30.01.2023թ., Արայիկ Լևի Խաչատրյանի 30.01.2023թ., Ալեքսան Էդուարդի Բաղդասարյանի 30.01.2023թ., Ժորա Կարապետի Մնացականյանի 30.01.2023թ., Արտուշ Անուշավանի Աբգարյանի 30.01.2023թ., Արթուր Անատոլյայի Սարուխանյանի 26.01.2023թ., Աշոտ Մեսրոպի Գրիգորյանի 27.01.2023թ. Վրեժ Ռուբենի Գևորգյանի 27.01.2023թ., Էդիկ Հովակիմի Փարսադանյանի 31.01.2023թ. և Տիգրան Սարգսի Մելիքսեթյանի 31.01.2023թ. դիմումները՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին և պարզաբանեց, որ նիստի քննարկմանը ներկայացված հայտերը ուսումնասիրվել են լիցենզավորման և թույլտվությունների բաժնի կողմից, ստուգվել են ներկայացված ավտոմոբիլների տեխնիկական զննություն անցնելու փաստը և գազաբալոնների վկայագրման և ավտոմոբիլի սակաչափիչի ստուգաչափման փաստաթղթերի բնօրինակները:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԲԵՆԻԿ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՀԱԿՈԲՅԱՆ	6 կողմ, 0 դեմ
ՍԱՄՎԵԼ ԱԶԱՏԻ ԵՂՈՅԱՆ	6 կողմ, 0 դեմ
ԱՐՍԵՆ ԵՐԵՄԻ ԿՈՍՏԱՆՅԱՆ	6 կողմ, 0 դեմ
ՄԱՆՎԵԼ ԱԶԱՏԻ ԵՂՈՅԱՆ	6 կողմ, 0 դեմ
ԱՐՄԵՆ ԿԱՌԼԵՆԻ ՈՒՆՈՒՍՅԱՆ	6 կողմ, 0 դեմ
ՎԱՀԱՆ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՂԱԶԱՐՉՅԱՆ	6 կողմ, 0 դեմ
ԼԵՎՈՆ ԲԱԴԱԼԻ ՂԱԶԱՐՅԱՆ	6 կողմ, 0 դեմ
ԱՐՏՅՈՄ ՌՈՒԲԵՆԻ ՄԵԼԻՔՅԱՆ	6 կողմ, 0 դեմ
ԳԵՂԱՄ ՊԵՏՐՈՍԻ ՄԵԼԻՔՅԱՆ	6 կողմ, 0 դեմ
ՌԱԶՄԻԿ ՌԱՖԻԿԻ ՄԻՍԿԱՐՅԱՆ	6 կողմ, 0 դեմ
ԿԱՐԱՊԵՏ ԳԵՂԵՎՈՆԻ ԱՎԵՏՅԱՆ	6 կողմ, 0 դեմ
ԿՏՐԻՉ ՎԱՀԱՆԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ	6 կողմ, 0 դեմ
ԱՐԱՅԻԿ ԼԵՎԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ	6 կողմ, 0 դեմ
ԱԼԵՔՍԱՆ ԷԴՈՒԱՐԴԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ	6 կողմ, 0 դեմ
ԺՈՐԱ ԿԱՐԱՊԵՏԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ	6 կողմ, 0 դեմ
ԱՐՏՈՒՇ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԱԲԳԱՐՅԱՆ	6 կողմ, 0 դեմ
ԱՐԹՈՒՐ ԱՆԱՏՈԼՅԱՅԻ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ	6 կողմ, 0 դեմ
ԱՇՈՏ ՄԵՍՐՈՊԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ	6 կողմ, 0 դեմ
ՎՐԵԺ ՌՈՒԲԵՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ	6 կողմ, 0 դեմ
ԷԴԻԿ ՀՈՎԱԿԻՄԻ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ	6 կողմ, 0 դեմ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍԻ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ	6 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1471-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահ Ա. Սիմոնյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյան